ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի
քաղաքացիական և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սույն հոդվածը նվիրված է վճռաբեկ բողոք ներկայացնելու կարգին, այն է՝ վերաքննիչ որոշումների բողոքարկման ժամկետներին, բողոքի բովանդակությանը, բողոքին կցվող փաստաթղթերին, բողոքարկման հիմքերին, բողոքը վերադարձնելուն, բողոքը վարույթ ընդունելը մերժելուն և վճռաբեկ բողոքարկման հետ կապված այլ մանրամասների: Հեղինակը արել է երեք առաջարկներ, որոնք վերաբերում են վճռաբեկ բողոքի բովանդակությանը, վճռաբեկ բողոքը վերադարձնելուն և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելուն:

Հիմնաբառեր- *վճռաբեկ վարույթ, վճռաբեկ բողոք, իրավաբանական փաստեր, բողոքարկող սուբյեկտ, դատավարական կարգավիճակ, դատական ակտ, սահմանադրական դատարան, դատավարագետ, նոր կամ նոր երևան եկած հանգամանք, վարույթ, մեկնաբանություն*:

Վճռաբեկ վարույթի հարուցումը շահագրգիռ անձի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի վերանայման իրավունքի իրականացումն է: Վճռաբեկ բողոք տալը հետաձգում է վերաքննիչ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը, հետևաբար՝ նաև դրա հարկադիր կատարումը, բացառությամբ անհապաղ կատարման դեպքերի: Վճռաբեկ բողոքի իրավաբանական ճշգրիտ ձևակերպումներ և վճռաբեկ դատարանում գործի քննության անհրաժեշտ որակ ապահովելու նպատակով օրենսդիրը սահմանել է, որ գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով (ՔԴՕ 223-րդ հոդվ. 3-րդ կետ):

Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

Վճռաբեկ վարույթի հարուցման իրավական հիմքը դատավարական իրավաբանական փաստերի ամբողջությունն է (իրավաբանական կազմը), որոնց առկայության հետ դատավարական նորմերը կապում են շահագրգիռ անձի վճռաբեկ բողոքարկման իրավունքը: Մասնավորապես, վճռաբեկ վարույթի հարուցման հիմքերի թվին կարելի է դասել հետևյալ իրավաբանական փաստերը՝ բողոքարկողի մոտ վերանայման սուբյեկտի կարգավիճակի առկայությունը, վերանայման օբյեկտի առկայությունը, բողոքարկման պայմանների պահպանումը: Նեղ իմաստով վճռաբեկ վարույթի հարուցման հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը:

Վ.Վ.Յարկովի կարծիքով, դրական այնպիսի դատավարական իրավաբանական փաստերը, ինչպիսիք են բողոքարկողի մոտ գործին մասնակցող անձի կարգավիճակի և վճռաբեկ բողոքարկման ենթակա դատական ակտի առկայությունը, պետք է դասել վճռաբեկ վարույթի հարուցման հիմքերի փաստական կազմի պասսիվ տարրերի թվին: Պասսիվ տարրերն իրենցից ներկայացնում են փաստական կազմի սկզբնական օղակները, որոնք հստակեցնում են վճռաբեկ բողոքարկման իրավունքի առաջացումը, իսկ վերջնական օղակը կազմում է ակտիվ դատավարական իրավաբանական փաստը՝ գործողությունը, որն արտահայտվում է գործին մասնակցող անձի կողմից վճռաբեկ բողոք բերելով, ինչն էլ հանգեցնում է վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացմանը[1]:

Հարկ է նշել, որ վճռաբեկ բողոքի ստացումը մեխանիկորեն վճռաբեկ վարույթ չի հարուցում: Բողոքարկման իրավունքի իրականացման համար, բացի քննարկված օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներից, անհրաժեշտ է հետևել նաև մի շարք ձևական պայմանների:

Վճռաբեկ բողոքարկման պայմաններն այն հանգամանքներն են, որոնք կապված են վճռաբեկ բողոքի ներկայացման կարգի, բովանդակության և ձևի հետ:

Օրենքը սահմանում է, որ բողոք բերելու հիմքերի առկայության դեպքում ՔԴՕ 223-րդ հոդվածում նշված անձինք (գործին մասնակցող անձինք, գլխավոր դատախազը և նրա տեղակալները օրենքով նախատեսված դեպքերում) բերում են վճռաբեկ բո-

ղոք և պատշաճ ձևով ուղարկում են վճռաբեկ դատարան, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ու գործին մասնակցող անձանց: Դատական ակտը կայացրած դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից անհապաղ պարտավոր է գործը պատշաճ ձևով ուղարկել վճռաբեկ դատարան (ՔԴՕ 230-րդ հոդվ.):

Վճռաբեկ բողոքին ներկայացվող հաջորդ պայմանը դրա (վճռաբեկ բողոքի) համապատասխանությունն է օրենքով սահմանված պահանջներին:

Ինչպես իրավացիորեն նշում է Օ.Վ.Ժուկովան, օրինական ուժի մեջ չմտած դատարանի որոշման բողոքարկումը, դատարանի որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման առավել արագ և մատչելի միջոց համարելու հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքի պահանջների նվազագույն ցանկը: Բացի այդ, վճռաբեկ բողոքի բովանդակության հստակ դատավարական կարգավորման առկայությունը ձեռնտու է բողոքարկող սուբյեկտին և անհրաժեշտ է դատարանին՝ որոշման օպերատիվ ստուգման համար[2]:

Համաձայն ՔԴՕ 231-րդ հոդվածի 1-ին մասի՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի՝

1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը,

2) բողոք բերող անձի անունը (անվանումը), ազգանունը, հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում դրա առկայության դեպքում), դատավարական կարգավիճակը,

3) դատական ակտ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան,

4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները,

5) ՔԴՕ 234-րդ հոդվածի 1-ին մասի այն կետի հիմնավորումները, որ ըստ բողոք բերողի՝ հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար,

6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

2. Երբ վճռաբեկ բողոք բերող անձը նշում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ապա նա պետք է հիմնավորի, որ բողոքի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը՝ վճռաբեկ բողոքում հիմնավորելով որ՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ստորադաս դատարանի դատական ակտում կիրառված միևնույն նորմի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ,

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ կցելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը և մեջբերելով ստորադաս դատարանի դատական ակտի այն մասը, որը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին՝ կատարելով համեմատական վերլուծություն բողոքարկվող դատական ակտի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի միջև առկա հակասության վերաբերյալ,

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը. կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հակասության վերաբերյալ,

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն բողոքարկվող դատական ակտի և նույնական փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ,

5) բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

www.journal.lawinstitute.am

3. Վճռաբեկ բողոքը ՔԴՕ 234-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

4. Վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

5. Վճռաբեկ բողոքին կցվում են նաև օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու, տարժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վճռաբեկ բողոքին կցվում կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդություն:

Ըստ դատավարագետ Ռ.Գ.Պետրոսյանի՝ վճռաբեկ բողոքն իր բովանդակությամբ հիմնականում նման է վերաքննիչ բողոքին, բայց ունի որոշ առանձնահատկություններ: Երբ սրանք կազմվում են պրոֆեսիոնալ իրավաբանների կողմից, ապա այստեղ հատկապես նշվում են բողոք բերող անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի պարտադիր վկայակոչմամբ, և այն, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, և դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով գործի վերանայման հիմքերը[3]:

Ըստ վերը նշվածի՝ վճռաբեկ բողոքում պետք է պարտադիր կերպով հիմնավորվի բողոք բերող անձի պահանջները: Նման աշխատանք, որպես կանոն, ի զորու է կատարել միայն արհեստավարժ իրավաբանը: Իրավունքի ոլորտում հատուկ գիտելիքների չտիրապետող անձի համար դժվար է, որոշ դեպքերում էլ՝ գրեթե անհնար՝ կատարելու նման ծավալուն հետազոտական աշխատանք:

Հարկ է ընդգծել, որ դատարանն ըստ էության միակ պետական մարմինն է, որին դիմելը պայմանավորված է այն դիմումների ու բողոքների բովանդակության որոշակի պահանջներին հետևելու անհրաժեշտությամբ, որոնք սահմանված են գործի ճիշտ և ժամանակին քննության անհրաժեշտ պայմանների ստեղծման, ինչպես նաև գործին մասնակցող այլ անձանց իրավունքների ապահովման նպատակներով:

Բողոք բերող անձանց խնդրանքները ձևակերպվում են վճռաբեկ ատյանի դատարանի համար նախատեսված լիազորությունների շրջանակին համապատասխան: Դրա հետ կապված՝ վճռաբեկ բողոքը կարող է պարունակել խնդրանք՝ գործի վարույթը դադարեցնելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին որոշումը բեկանելու, որոշումը փոփոխելու կամ վճռաբեկ դատարանի կողմից գործի վերաբերյալ նոր որոշում կայացնելու մասին:

Վճռաբեկ բողոքին կարող են կցվել նաև լրացուցիչ նյութեր, հատկապես՝ փաստաթղթեր, որոնք էական նշանակություն ունեն գործի համար և հիմնավորում են բողոքարկված վճռի բեկանման, գործը նոր քննության ուղարկելու անհրաժեշտությունը:

ՀՀ ՔԴՕ-ում բացակայում է գրավոր ապացույցների պատճենների ներկայացման պարտադիրությունը: ՌԴ ՔԴՕ 378-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն վճռաբեկ բողոքին պարտադիր կերպով կցվում են գրավոր ապացույցների պատճենները՝ գործին մասնակցող անձանց թվին համապատասխան:

Ինչպես իրավացիորեն նշում էր Ի.Վ.Ռեշետնիկովան, ՌՍՖՍՀ նախկին ՔԴՕ 287-րդ հոդվածը չէր պահանջում գրավոր ապացույցների պատճենների ներկայացումը, որը բարդացնում էր ապացուցման առարկայի ամբողջական ու ժամանակին որոշակիացումը, քանի որ պատասխանողի առարկությունների մասին դատարանն ու հայցվորը (բողոք բերողը) տեղեկանում էին, որպես կանոն, միայն դատական քննության ժամանակ: Մինչդեռ պատճենների ներկայացումն անհրաժեշտ էր, որպեսզի գործին մասնակցող անձինք կարողանան նախապես և պատշաճ ձևով նախապատրաստվել վճռաբեկ ատյանի դատարանում գործի վերանայմանը[4]:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ 231-րդ հոդվածը լրացնել ևս մեկ կետով՝ այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 231. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը.

1...

2...

3...

...

6) Վճռաբեկ բողոքն ու նրան կցված գրավոր ապացույցները վճռաբեկ դատարան են ներկա-

յացվում գործին մասնակցող անձանց թվին համապատասխան պատճեններով»:

Նշված դրույթը կխթանի քաղաքացիական գործերով մրցակցության սկզբունքի իրագործմանը:

Անկախ քաղաքացիական գործերի միմյանց հետ կապված լինելու հանգամանքից՝ երկու կամ ավելի քաղաքացիական գործերով մեկ վճռաբեկ բողոք բերել չի թույլատրվում: Նման դեպքերում վճռաբեկ դատարանը պետք է բողոքը հետ ուղարկի բողոք բերող անձին՝ բողոքները պատշաճ ձևով (առանձին-առանձին) ձևակերպելու համար: Չէ՞ որ ամեն մի վճիռ լուծում է տարբեր հարցեր և ունի վճռաբեկ վերանայման իր ուրույն հիմքերը:

Ըստ ՔԴՕ 234-րդ հոդվածի 1-ին կետի՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ

3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Վճռաբեկ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը, մինչև վճռաբեկ դատարանը կսկսի գործի քննությունը (ՔԴՕ 232-րդ հոդվ.): Եթե բողոքը բերել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալները, ապա գլխավոր դատախազն այն հետ վերցնելու իրավունք ունի (ՀՀ դատախազության մասին օրենքի 28-րդ հոդվածի 4–րդ մաս): Նման բողոքները կարող են հետ վերցվել անկախ այն հանգամանքից, թե պետական մարմինը արդյոք հետ է վերցրել իր բողոքը, թե ոչ: Գործի դատաքննության ընթացքում վճռաբեկ բողոքը չի կարող ոչ հետ վերցվել և ոչ էլ փոփոխվել: Բողոք բերող դատախազը կարող է կամ չպաշտպանել այն կամ էլ պաշտպանել մասամբ:

Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում դրա բովանդակությանն օրենքով ներկայացվող պահանջներին:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար (ՔԴՕ 233-րդ հոդվ.):

Բողոքի թերությունների շտկման համար սահմանելով մինչև մեկամսյա ժամկետ՝ պետք է հաշվի առնել նաև այդ թերությունների բնույթը և համապատասխան թղթաբանության իրականացման (անցկացման) ժամանակը, որը, մեր կարծիքով, ողջամիտ չէ:

Նշված ժամկետը սահմանելիս պետք է ելնել համապատասխան ժամկետում գործողությունների կատարման հնարավորությունից, հարցերի բարդության աստիճանից և դրանց լուծման անհրաժեշտությունից, գործողությունների կատարման ժամանակ ծագող հնարավոր խոչընդոտներից, այն սուբյեկտի առանձնահատկությունից, որը պետք է կատարի որոշակի գործողություններ (օրինակ՝ սուբյեկտի առողջական վիճակը, նյութական դրությունը և այլն):

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք ՔԴՕ 233-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել ժամկետի հետ կապված փոփոխություն, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 233. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը.

1...

2...

3. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև երկամսյա (ողջամիտ) ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

Նշված առաջարկը կնպաստի, որ բողոք բերող սուբյեկտը ներկայացնի ավելի հիմնավոր վճռաբեկ բողոք:

ՔԴՕ 233.1 հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ 1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է, կամ այն մերժվել է, 2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չուներ, 3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէր բողոքարկման վճռաբեկության կարգով, 4) վճռաբեկ բողոք ներկայացրած անձը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին, 5)բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու

մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

Ըստ ՔԴՕ 234-րդ հոդվածի՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Պետք է նշել, որ ՔԴՕ 234-րդ հոդվածի 1-ին կետը նախկինում շատ անորոշ էր: Պարզ չէր, թե երբ կարող է վճռաբեկ դատարանի որոշումը էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Այդ բացը ՀՀ օրենսդիրը լրացրեց իր 10.06.2014թ. ՀՕ-49-Ն օրենքով,

2) առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ

3) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Սույն հոդվածի իմաստով բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե՝

1) տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ,

2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված տվյալ նորմի սահմանադրահրավական բովանդակությանը,

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

5) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Ինչպես արդեն նշել ենք, վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ (ՔԴՕ 234-րդ հոդված, 1-ին կետի 3-րդ ենթակետ): Իսկ ի՞նչ ենք հասկանում «դատական սխալ» արտահայտության տակ: Այս հարցի պատասխանը տրված է ՔԴՕ 227-րդ և 228-րդ հոդվածներում:

Ըստ ՔԴՕ 227-րդ հոդվածի նյութական իրավունքների նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այն ակտը, որը պետք է կիրառեր,

2) կիրառել է այն օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր,

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ ՀՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՔԴՕ 228-րդ հոդվածի համաձայն դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե դա հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Դատարանի վճիռը դատավարական սխալների պատճառով բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, որը, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել,

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին,

3) դատական ակտը ստորագրված կամ կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից,

4) դատական ակտը կայացրել է (են) ոչ այն դատավորը (դատավորները), որը (որոնք) մտնում է (են) գործը քննող դատարանի կազմի մեջ,

5) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը,

6) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ,

7) դատական ակտը շոշափում է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքները և պարտականությունները,

8) առկա են ՔԴՕ 103-րդ հոդվածով սահման-

www.journal.lawinstitute.am

ված՝ հայցն առանց քննության թողնելու հիմքերը, կամ

9) առկա են ՔԴՕ 109-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանի որոշմամբ կարող է կասեցվել բողոքարկված դատական ակտի կատարումը:

ՔԴՕ 233.2 հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե՝բացակայում են ՔԴՕ 233-րդ հոդվածով, 233.1 հոդվածով և 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՔԴՕ 234-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից երեք ամսվա ընթացքում (ՔԴՕ 233.2 հոդվ.):

ՔԴՕ 233-րդ հոդվածում ամրագրված է վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերը, և այդ հիմքերի առկայության դեպքում սահմանված է վճռաբեկ դատարանի համապատասխան գործառույթը՝ «որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին»: Նույնը վերաբերում է ՔԴՕ 233.1 հոդվածին, որտեղ ամրագրված է բողոքը առանց քննության թողնելու հիմքերը և այդ հիմքերի առկայության դեպքում՝ վճռաբեկ դատարանի համապատասխան գործառույթը՝ «գործը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը առանց քննության թողնելու մասին»:

ՔԴՕ 233.2 հոդվածի 1-ին մասով 233 և 233.1 հոդվածների հիմքերը նախատեսելը՝ որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմք, մեր կարծիքով, ողջամիտ չէ, քանի որ, ինչպես վերը նշվեց, այդ հոդվածներում նախատեսված հիմքերով սահմանված է վճռաբեկ դատարանի միևնույն գործառույթը: Նման իրավիճակում դատական պրակտիկայում առաջանում է խառնաշփոթ, որը կարող է հանգեցնել կամայականությունների, և իրավակիրառ մարմինը, տվյալ դեպքում՝ վճռաբեկ դատարանը, բողոքը և գործը ստանալուց հետո իր գործառույթն իրականացնելիս կանգնում է (կկանգնի) երկընտրանքի առաջ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելու համար ՔԴՕ 233.2 հոդվածով սահմանված է մինչև երեք ամիս ժամկետ, որը նույնպես, մեր կարծիքով, ողջամիտ չէ, քանի որ վերը նշված ՔԴՕ 233 և 233.1 հոդվածներով որոշում կայացնելու համար սահմանված է մինչև մեկ ամիս ժամկետ. այս դեպքում նույնպես վճռաբեկ դատարանը իրականացնում է նույնաբնույթ գործառույթ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք փոփոխել և վերախմբագրել ՔԴՕ 233.2 հոդվածը՝ այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 233.2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը

1. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում է սույն օրենսգրքի 234-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 234-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում»:

Վերը նշված հարցերով վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին ու գործին մասնակցող անձանց և համապատասխան դատարան այն հրապարակելու օրվանից ողջամիտ ժամկետում (ՔԴՕ 241-րդ հոդվ.):

[1] Տե՛ս Ярков В.В. Юридические факты в механизме реализации норм гражданского процессуального права. Екатеринбург. 1992. С. 271-272, 280.
[2] Տե՛ս Жукова О.В. Кассационное производство в гражданском процессе: Учеб. пособие. Тверь, 2005. С. 37.
[3] Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատ. Երևան, Ոսկան Երևանցի, 2012 . էջ 528:
[4] Տե՛ս Решетникова И.В. Курс доказательственного права в российском гражданском судопроизводстве. М., 2000. С. 242.

Артур Назаретян
Соискатель кафедры гражданского и гражданско-процессуального права института права и политики Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ

Порядок предъявления кассационной жалобы

Настоящая статья посвящена порядку предъявления кассационной жалобы, то есть срокам обжалования апелляционных решений, содержанию жалобы, прилагающимся к жалобе документам, основаниям обжалования, возвращению жалобы, отказу принятия жалобы к производству и связанным с кассационным обжалованием другим подробностям. Автор сделал три предложения, которые относятся к содержанию кассационной жалобы, возврату кассационной жалобы и отказу в принятии кассационной жалобы к производству.

Ключевые слова: *кассационное производство, кассационная жалоба, юридические факты, обжалующий субъект, процессуальный статус, судебный акт, конституционный суд, процессуалист, новое или вновь открывшееся обстоятельство, производство, комментарий.*

Artur Nazaretyan
Post-graduate student of the Chair of civil law and civil procedural law of law and politics institute of the Russian- Armenian (Slavonic) university

SUMMERY

The order of presenting the cassation appeal

This article refers to the order of presenting the cassation appeal that is: the deadlines for appealing decisions, the content of the appeal, the documents connected to the appeal, the bases of the appeal, for returning the appeal, for refusing to accept the appeal as a proceedings and other details connected with the cassation appeal. The author has made three offers which are connected to the content of the cassation appeal, for returning of the cassation appeal and refusing to accept the cassation appeal as proceedings.

Keywords: *cassation proceedings, cassation appeal, legal facts, appealing subject, procedural status, Juridical Act, Constitutional Court, trial specialist, new or newly appeared circumstance, proceedings, commentary.*